ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴՎԻՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԱՆՏԻԿ ՇԵՐՏԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՔՈՉԱՐՅԱՆ Գ.Գ.*

Դեռևս անցյալ դարի 30-ական թվականներին Դվինի վաղմիջնադարյան հոգևոր կենտրոնում[1] կաթողիկե և միանավ եկեղեցիները, VII դ. կաթողիկոսական պալատը և սրանց միջև ընկած տարածքը պեղելիս՝ միջնադարյան նյութերի հետ մեկտեղ հայտնաբերվել են անտիկ ժամանակաշրջանին հատկանշական խեցեղեն[2] և կարասային թաղումներ[3]: Ավելի ուշ՝ 70-ականներին, երբ հատուկ հետազոտության առարկա դարձան տվյալ ժամանակաշրջանի նյութերը, հիշյալ տարածքում՝ մ.թ. IV-V դդ. և մ.թ.ա. X-VIII դդ. շերտերի միջև հայտնաբերվեց մ.թ.ա. II - մ.թ. I դարերով թվագրվող ընտիր գունազարդ խեցեղենով[4] հագեցած 0,30÷0,60 մ հզորությամբ մշակութային շերտ:

Շերտագրական դիտարկումները բացահայտեցին Դվինի վաղմիջնադարյան (IV-V դդ.) նոր ձևավորվող հոգևոր կենտրոնի ծավալուն կառուցապատման ժամանակ անտիկ շերտի հատվելն ու աղճատվելը: Ժամանակագրական տարբեր շերտերում հայտնաբերվել են անտիկ շրջանի

---

* ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտ. թեկնածու, vruyr2001@yahoo.com, հոդվածի ընդունման օրը՝ 26.12.2018, գրախոսման օրը՝ 01.03.2019:

[1] Դվինի վաղմիջնադարյան հոգևոր կենտրոնը գտնվում է միջնաբերդի բլրի հարավարևմտյան ստորոտին և պայմանականորեն կոչվում է **կենտրոնական թաղամաս:**

[2] Տե՛ս Հայաստանի պատմության թանգարանի՝ Դվինի պահոցի 1937, 1938 թթ. հավաքածուները (1543/122, 231, 240, 280, 281, 292, 418, 474-480, 512, 525, 1617/99, 134, 147, 190 և այլն):

[3] Տե՛ս **Тер-Аветисян С.В.** Двин. Его история и раскопки в 1937-1938 гг. (**Տեր-Ավետիսյան Ս.Վ.,** Հայագիտական հետազոտություններ, Ե., 2010, էջ 210), **Ղաֆադարյան Կ.,** Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 1, Ե., 1952, էջ 59:

[4] Անտիկ ժամանակաշրջանի գունազարդ խեցեղենի հավաքածուն պարունակում է համակենտրոն շրջանագծերի, ծաղկաշղթաների, ներգծված կիսաշրջանների, ցանցկեն, զիգզագաձև զարդագոտիներով պարուրված տափաշշերի, կիսագնդաձև գավաթների, ըմպանակների, խաչազարդ ու բուսազարդ թասերի, պնակների բեկորներ:

նյութեր, իսկ վաղմիջնադարյան շինություններում՝ կրկնակի օգտագործված սրբատաշ քարեր և ճարտարապետական մանրամասներ:

Սպիտակ ավազաքարե, շիկավուն ու թխագույն տուֆե սրբատաշ քարերով են շարված Սուրբ Գրիգոր կաթողիկե եկեղեցու նախնական (IV դ.) եռանավ շինության՝

- կրաշաղախով ամրացված հիմնապատերը,
- ավազ խորանն ամբողջությամբ,
- հարավային պատի արևմտյան նախավերջին որմնասյան հիմքը,
- հարավային ու հյուսիսային թևերին զուգահեռ «նորահայտ պատերը» (ստորին շարքում առկա են նաև բազալտե սրբատաշ սալեր)[5]:

IV դ. կաթողիկեի եռանավ շինությունը կառուցելիս նման քանակությամբ սրբատաշ քարերի՝ զանգվածաբար կրկնակի օգտագործման իրողությունը վկայում է տվյալ թաղամասում մինչ այդ քանդված կառույցների առկայության մասին: Ընդ որում, հիշյալ քարերին ժամանակագրորեն առնչվում են նույն տեղում և հարակից տարածքում հայտնաբերված մ.թ.ա. II-մ.թ. III դդ. բնորոշ ճարտարապետական տարրեր.

- սպիտակ ավազաքարե տորաձև սյունախարիսխներ,
- տուֆե «ատտիկական» սյունախարիսխներ, ձևավոր կողապատկերով, խորաքանդակ բուսազարդ գոտիով սյունախարիսխներ, սյան մատնեքավոր գլանի վերնամաս, ցլագլուխ խոյակ,
- բազալտե տանիքի ծածկասալ (նկ. 1, 2-8, նկ. 2, 1-2)[6]:

Վերը թվարկածից զատ, Դվինի վաղմիջնադարյան գրեթե բոլոր մոնումենտալ շենքերի (IV դ. «Արշակունիների գահադահլիճ», V դ. կաթողիկոսական պալատ և այլն) հիմնապատերի մեջ առկա են մշակութային նախորդ շրջանի շինություններին պատկանող սրբատաշ քարեր, կամարի,

---

[5] Մանրամասն տե՛ս **Քոչարյան Գ.,** Դվինի մայր տաճարի շերտագրության շուրջ (ըստ 1992-1993 թթ. պեղումների արդյունքների) (Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն, 2018, № 2, էջ 3-11):

[6] Միջնադարյան Դվինի վերջնական անկումից հետո կենտրոնական թաղամասը դառնում է շինարարական նյութի հայթայթման վայր, որի հետևանքով քարակերտ հուշարձանները «խիստ կողոպտվում են ու աղճատվում» և ճարտարապետական մանրամասները հայտնվում են մերձակա գյուղերի տարածքում (տե՛ս **Тер-Аветисян С.В.,** նշվ. աշխ., էջ 254), տե՛ս օրինակ, սպիտակ ավազաքարից վարպետորեն կերտված անտիկ ժամանակաշրջանի **տորաձև սյունախարիսխները** կրկնակի օգտագործված են Վերին Արտաշատի XIX դ. եկեղեցու եռանավ սրահում (նկ. 2, 1-2, գծ. 1):

քիվի տարրեր, որոնց մի մասը կրում է հին սվաղի, ներկի, որմնանկարի հետքեր: Իսկ VII դ. կաթողիկոսական տուֆաշեն պալատում կրկնակի օգտագործված են բազալտե սյունախարիսխ[7] և օձաքարից կերտված տորաձև սյունախարիսխ (նկ. 1, 8): 1930-ականներին վկայված է նաև միջնաբերդի մուտքի ու միանավ բազիլիկ եկեղեցու միջև ընկած տարածքում բացված, XI-XII դդ. պատի շարվածքում վերստին օգտագործված խոշոր կոպտատաշ քար՝ վրան «խոռոչներ երկաթե ամրակների ու արճիճե լցվածքի համար»[8]:

Դվինի անտիկ շերտում կավաշեն կացարանների կողքին (հմմտ. միջնաբերդի բլրի գագաթային հարթակի բնակելի համալիրները) ակնհայտ է համաժամանակյա քարաշեն կերտվածքների առկայությունը: Դրանք, հավանաբար, եղել են պաշտամունքային կառույցներ: Առավել մանրակրկիտ ոճաբանական վերլուծությամբ թերևս հնարավոր լինի որոշել հիշյալ ճարտարապետական մանրամասների շինարարական ժամանակագրությունը: Այսուհանդերձ, կենտրոնական թաղամասի քարակերտ, տորաձև սյունախարիսխներն ու բարձրորակ, գունազարդ խեցեղենը ոճական առումով համահունչ են բլրի գագաթային հարթակի՝ մ.թ.ա. II - մ.թ. I դդ. քաղաքացիական շինություններում՝ իրենց նախնական տեղում առկա սպիտակ ավազաքարե ու շիկավուն տուֆե սյունախարիսխներին և կից խեցեղենին:

Սրբավայրում հայտնաբերված՝ մ.թ.ա. II - մ.թ. I դդ. բնորոշ խեցեղենը պարունակում է գունազարդ հարդարումով բարձրորակ խեցանոթների (թասերի, ըմպանակների, պնակների, սկուտեղների) բեկորներ: Վերջիններիս որակական մակարդակը հուշում է նման ընտիր սպասքի գործածության հնարավորությունը ծիսապաշտամունքային արարողություններում:

Արտաշիսյան դարաշրջանի պաշտամունքային կառույցների գոյությունը Դվին սրբավայրում ցարդ կատարված պեղումներով հաստատված չէ: Հնարավոր է՝ դրանք ավերվել են մ.թ. 59 թ. հռոմեացիների հանկարծահաս հարձակումով, որից հետո ամայացած սրբավայրը ժամանակավորապես վերածվել է դամբարանադաշտի: Այդ մասին են վկայում այստեղ բացված կարասային շարքային թաղումների շերտագրական տվյալների

---

[7] Տե՛ս **Тер-Аветисян С.В.,** նշվ. աշխ., էջ 256 (հիշյալ սյան բազալտե խարիսխը, որն ըստ հեղինակի՝ VII դ. տուֆաշեն պալատում «ընդհանուր համակարգի մեջ չի մտնում», չի պահպանվել):

[8] Տե՛ս նույն տեղում, էջ 262:

վերլուծությունն ու գույքակազմի թվագրության վերին սահմանագիծը՝ ոչ ուշ, քան մ.թ. I դարի վերջը[9]:

Սրան ժամանակագրորեն հաջորդում են Դվինում հայտնաբերված՝ Հռոմեական կայսերական շրջանի՝ մ.թ. II դ. միթրայական ***բազալտե զոհասեղանը*** (նկ. 1, 1), Գառնիի հեթանոսական տաճարի տանիքի ծածկասալերին նման ***բազալտե ծածկասալը*** (նկ. 1, 4), վերը հիշատակված՝ կաթողիկեի հիմքերում շարված ***բազալտե սրբատաշ սալերը***, կաթողիկոսական պալատի ***բազալտե սյունախարիսխը***: Թվարկած նյութերի համեմատական վերլուծությունը պատմաքաղաքական իրադրության համատեքստում ուրվագծում է Վաղարշապատ - Արտաշատ «Բուն պողոտային» հարող Դվին ամրոց-սրբավայրում՝ մ.թ. II դ. կեսերին Հայաստանը բռնազավթած հռոմեական բանակի բենեֆիցիարիուսների հիմնած ուղեցույց-ուղեկալ պահակակետի (statio) հնարավոր ներկայությունը: Նման ենթադրության համար բավարար հիմք են Դվինի համաժամանակյա «բազալտաշեն կառույցի» և Միթրային ձոնված զոհասեղանի առկայությունը, ինչպես նաև նվաճված տարածքների սրբավայրերում՝ երկրի հռոմեականացման նպատակով հոգևոր կառույցներ իրականացնելու փաստը[10]:

Այսպիսով՝ Դվին բազմաշերտ հնավայրի հնագիտական ուսումնասիրության տվյալների ամփոփումը հավաստում է, որ բլրի ստորոտին առնվազն մ.թ.ա. I հազ. սկզբից ի վեր հայտնի հնավանդ սրբավայրը[11] ***Արտաշիսյան և վաղ Արշակունյաց ժամանակաշրջաններում տևականորեն պահպանում էր իր գործառույթը:***

Մ.թ. IV դ. 30-ականներին արքունիքը Արտաշատից Դվին տեղափոխելիս, առաջնորդվելով բնապատկերային ճարտարապետության ավանդական սկզբունքներով, Խոսրով Կոտակ Արշակունին (330-338) իրականացրեց քաղաքաշինական մի ամբողջություն կազմող կուռ մտահղացում՝ ***Դվին*** (*արքունի նստավայր*)+***Խոսրովակերտ*** (*արքայական ծառազարդ*

---

[9] Տե՛ս **Քոչարյան Գ.,** Անտիկ Դվինը ամրոց-սրբավայրից արքայանիստ քաղաք (Բանբեր հայագիտության, Հայագիտական միջազգային հանդես, 2014, № 1, էջ 31-33):

[10] Ամրոցից դուրս, անմիջապես ճանապարհի վրա տեղակայված պահակակետը տեղի սրբավայրի հետ կազմում էր մի ամբողջություն. սրա և թվարկած նյութերի մասին մանրամասն տե՛ս **Քոչարյան Գ.,** Դվինը վաղ Արշակունյաց շրջանում (Ուրվագծման փորձ) [Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 2002, № 3, էջ 206-214]:

[11] Դվին ամրոց-սրբավայրի՝ մ.թ.ա. III հազ. և I հազ. սկզբի մասին տե՛ս **Кушнарева К.Х.** Древнейшие памятники Двина, Е., 1977, էջ 5-79 և այլն, **Քոչարյան Գ.,** Դվին բազմաշերտ հուշարձանի ձևավորման ընթացքը (Հանդէս ամսօրեայ, 2017, № 1-12, էջ 1-10):

ապարանք-անտառապուրակ) + ***Տաճար մայրի*** (*արքայական կաղնետունկ անտառ-արգելոց*) = ***արքայանիստ համալիր կառույց***[12]:

Իր հիմնած պարսպապատ կաղնետունկ անտառներից մեկը արքայի կողմից ***«Տաճար մայրի»,*** այսինքն՝ ***«Տաճար անտառ»=«Սրբազան անտառ»=«Սրբազան կաղնու անտառ»=«Կաղնու տաճար»*** կոչելն, ըստ էության, կաղնեպաշտության, բնապաշտական հնավանդ աշխարհայեցողության ակնհայտ դրսևորում է: Հնդեվրոպական ավանդույթներում կաղնուտները բնական տաճարներ էին, այստեղ ***«ասպվածային պատգամներն ուղարկվում էին»*** կաղնիների ճյուղերի տատանումների և տերևների սոսափյունի կամ էլ սրանց հովանու տակ քնածներին մարգարեական երազներ առաքելու միջոցով[13]՝ արդեն ի վերուստ կանխորոշված ապագայի խորհրդանշաններով, որոնք և մեկնում էին քրմերը: Խոսրով Կոտակի «նորոգած»[14] սրբազան կաղնուտները նախկինում, ամենայն հավանականությամբ, նույնպես պատգամախոսարաններ են եղել: Առավել ևս, որ այս նույն տեղերում՝ «Ոստան Հայոց» գավառի սահմաններում էր գտնվում Ագաթանգեղոսի հիշատակած, Հայոց դարձի նախօրեին դեռևս գործող ***«Երազամույն տեղեր»***[15] ***պատգամախոսարան-սրբավայրը՝ երազացույց-երազահան Տիր աստծու տաճարով:*** Հնարավոր է, որ տվյալ կաղնուտ-պատգամախոսարանները Տիր աստծուն ձոնված «Երազամույն տեղերի» բաղադրիչ մասն են կազմել: Ի վերջո, «տեղեր» բառի հոգնակի թիվը, անտարակույս, որոշակի տարածության վրա սփռված լինել է նշանակում, իսկ

---

[12] **Մովսես Խորենացի,** Հայոց պատմություն (այսուհետև՝ Մովսես Խորենացի), թարգմ., ներած. և ծանոթ. Ստ. Մալխասյանի, Ե., 1990, Ը, III, էջ 170, **Փավստոս Բուզանդ,** Հայոց պատմություն, բնագիրը՝ Ք. Պատկանյանի, թարգմ. և ծանոթագր. Ստ. Մալխասյանի, Ե., 1987, III, Ը, էջ 33. սկզբնաղբյուրների մեկնությունը տե՛ս **Քոչարյան Գ.,** Անտիկ Դվինը ամրոց-սրբավայրից արքայանիստ քաղաք, էջ 34-37:

[13] Կաղնին-կաղնուտը հին հնդեվրոպական ավանդույթներում և կաղնեպաշտությունը մեզանում՝ ըստ ազգագրական տվյալների. տե՛ս **Քոչարյան Գ.,** «Տաճար մայրի» կաղնետունկ անտառապուրակ (Հանդէս ամսօրեայ, 2004, № 1-12, էջ 417-420):

[14] Մերօրյա հետազոտությունների տվյալների ամփոփումը հավաստում է, որ Խոսրով Կոտակն անտառատունկը ձեռնարկել է այստեղ վաղուց ի վեր եղած խոշորառէջք կաղնուտների անտառային զանգվածների հիմքի վրա, իրականացրել սրանց «վերակառուցմամբ» (մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 411-412):

[15] Տե՛ս **Ագաթանգեղոս,** Հայոց պատմություն, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, աշխարհաբար թարգմ. և ծանոթագր.՝ Ա.Ն. Տեր-Ղևոնդյանի, Ե., 1983, § 778, էջ 437, տե՛ս նաև **Էփրիկյան Հ.Ս.,** Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. I, Վենետիկ, 1903-1905, էջ 687:

պատգամախոսարանի առկայությունն ինքնին ենթադրում է սրբազան պուրակ, պաշտվող ծառեր: Հայ. Տիր/Տիւր դիցանվան ու դիցաբանական կերպարի հնդեվրոպական մշակութային ընդհանրությունից բխած լինելու հանգամանքը[16] և քննվող կաղնուտների ռելիկտային (մնացորդային) զանգվածների առկայությունը վկայում են «Երազամույն տեղերի» ծագման վաղեմությունը:

Ըստ Մովսես Խորենացու՝ Փոքր Ասիայից մեր աշխարհ բերված Արտեմիսի և Ապոլոնի պղնձածույլ, ոսկեզօծ արձանները նախ կանգնեցվել են Արմավիրում, ապա՝ Բագարանում[17]: Արտաշես Առաջինը (մ.թ.ա. 180-160 թթ.) նորակառույց Արտաշատում շինում է մեհյան «և Բագարանից այնտեղ փոխադրում Արտեմիսի արձանը և բոլոր հայրենական կուռքերը: Բայց ***Ապոլոնի արձանը կանգնեցնում է քաղաքից դուրս, ճանապարհին մոտ***»[18]:

Օտար դիցարանների օտար աստվածությունների արձանները վերագրվել են հայրենի աստվածություններին և տեղադրվել հայրենի հնավանդ սրբավայրերում[19]: Ապոլոնը պաշտվում էր Հունաստանի, Փոքր Ասիայի (արմավենու, սոճու, հացենու, ձիթենու և այլ) դիցանվեր անտառապուրակ-պատգամախոսարան սրբավայրերում[20]: Երվանդունիների գլխավոր սրբավայր Արմավիրի՝ Արեգ-Միհր-Ապոլոն պաշտամունքային բազմաշերտ համադրության մեջ ևս անսքող է Ապոլոնի առնչությունը Սոսյաց անտա-

---

[16] Տիր աստվածության դիցաբանական կերպարի հնագույն հնդեվրոպական արմատները որոնելիս՝ բացահայտվել է վաղնջական աշխարհայեցողությանն առնչվող նաև նրա բուսական անցյալը – *տիր դնել*՝ վաղագույն շարացան համակարգ, *տիր*՝ մեծահատ, կարմրահատ ցորեն, *տիրիփ*՝ ուռենու բարակ ճյուղ, որով կապում են խաղողի որթի մատները, *տիրիթ*՝ դռան սունկ, *թիր-տիր*՝ տանիքի գերան. մանրամասն տե՛ս **Քոչարյան Գ.Գ.,** Տիր/Տիւր աստվածությունը «Հայոց մեծաց» սերնդաշարքում [ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների (այսուհետև՝ Լրաբեր), 2005, № 1, էջ 130-134]:

[17] **Մովսես Խորենացի,** էջ 79-80, 106, II, ԺԲ, Խ:

[18] Նույն տեղում, էջ 112, II, ԽԹ:

[19] Տե՛ս Հեթանոս Հայաստանի ութ մեհեաններն Ագաթանգեղոսի եւ Մ. Խորենացւոյ համեմատ (Քննադատական ուսումնասիրութիւն Ա. Կարիէրի, թարգմանեց Հ. Յակոբոս վ. Տաշեան, Վիեննա, 1899):

[20] Տե՛ս **Страбон,** География в 17 книгах, пер., статья и коммент. Г.А. Стратановского, Л., 1964, VII, VII, 6; XIV, I, 5, 35; XVI, II, 6, **Павсаний,** Описание Эллады или путешествие по Греции во II веке по р. Х., СПб., 1887-1889, I, 21, 7; IV, 33, 4; VII,5,11; VII, 21,11-13; IX, 24,4; X, 33,11.

ռապուրակ-պատգամախոսարանի հետ[21]: Արայան Արայի զավակը (Անուշավան Սոսանվերը) «նվիրված էր Արամանյակի սոսի ծառերին Արմավիր քաղաքում, որոնց տերևների հանդարտ կամ սաստիկ շարժվելուց, նայելով քամու ուժին և ուղղությանը՝ մեր Հայոց աշխարհում սովոր էին գուշակություններ անել երկար ժամանակ»[22]: Մովսես Խորենացու «Հայոց մեծաց» սերնդաշարքում Հայկից սերված Արամանյակը Արմավիրի հիմնադիր Արամայիսի հայրն էր, այսինքն՝ մինչև Անուշավան Սոսանվերը, առնվազն յոթ սերունդ առաջ այս պուրակ-պատգամախոսարանն արդեն գոյություն ուներ[23]: «Հնարավոր է՝ Արամայիսը կառուցել է քաղաքը և հիմնել պուրակ ի պատիվ իր հոր՝ Արամանյակի հիշատակին»[24]: Այս պուրակ-պատգամախոսարանի առասպելաբանական միջավայրի վաղեմությունը տեսանելի է Արմավիր սրբավայրի հնագիտական հավաքական նկարագրում առնվազն մ.թ.ա. III հազ. ի վեր:

Ապոլոնի քննվող գործառույթը դրսևորվում է նաև Բագարան-Ծննդոց անտառ պաշտամունքային համալիրում երազահան մոգի աշակերտի հիշատակությամբ[25]:

Զուգադրելով Ագաթանգեղոսի հայերեն ու հունարեն բնագրերի և Մովսես Խորենացու վկայությունները՝ կարելի է ենթադրել, որ հուն. Ապոլոնը նույնացվել է հայ. Տիրի հետ[26] և դրվել Տիրին ձոնված «Երազամույն տեղեր» պատգամախոսարան-սրբավայրում, մայրաքաղաքից դուրս՝ «հուպ ի ճանապարհն»: Եվ, քանի որ օտար աստվածները համադրվում էին հայրենի աստվածություններին՝ առանց խաթարելու նրանց առասպելաբանական ինքնությունը, ուստի Ապոլոնը նույնացվելով Տիրի հետ՝ որպես գուշակների հովանավոր աստվածություն, դրվել է «Երազամույն տեղերում»: Միով բանիվ, «Երազամույն տեղեր» կաղնուտ-պատգամախոսարանում «Դրիմաս» (=«Կաղնու») և «Իքսոս» (=«Ճագոմի») մականուններ կրող

---

[21] Տե՛ս **Тревер К.В.** Очерки по истории культуры древней Армении (II в. до н. э.-IV в. н.э.), М.-Л., 1953, էջ 104-113, **Тирацян Г.** Вопросы преемственности официального культа в античной Армении (Լրաբեր, 1985, № 10, էջ 58-64):

[22] **Մովսես Խորենացի,** էջ 40 I, Ի:

[23] Տե՛ս **Карапетян И., Хачатрян Ж., Канецян А.** Доурартский Армавир (III –начало I тыс. до н.э.) (ՊԲՀ, 2004, № 1, էջ 265-266):

[24] Տե՛ս **նույն տեղում,** էջ 266:

[25] Տե՛ս **Մովսես Խորենացի,** II, ԽԸ, էջ 111:

[26] Մանրամասն տե՛ս **Քոչարյան Գ.,** «Տաճար մայրի» կաղնետունկ անտառապուրակ, էջ 421:

Նկ. 1



Նկ. 2

Նկ. 1 - Միթրային ձոնված բազալտե զոհասեղան, մ. թ. II դ., 2. Ցլագլուխ խոյակ, 3. սյան մատնեքավոր գլանի վերնամաս, 4. տանիքի որձաքարե ծածկասալ, 5. «ատտիկական» սյունախարիսխ, 6,7,8. տորաձև սյունախարիսխներ, ճարտարապետական տարրեր, մ.թ.ա. II-մ.թ. III դդ., Դվին
Նկ. 2 - Տորաձև սյունախարիսխներ մ.թ.ա. II-մ.թ. III դդ., Դվին (Վերին Արտաշատի XIX դ. եկեղեցու եռանավ սրահում, չափագրությունը՝ Արմեն Հակոբյանի)

Ապոլոն[27] - Տիրը թե՛ երազներ էր ուղարկում իր քնած հայցվորներին, թե՛ ձիրք ու ներշնչանք պարգևում քրմերին՝ մեկնելու դրանք:

Այսպիսով, Խոսրով Կոտակն իր պարսպապատ կաղնետունկ անտառապուրակները հիմնեց՝ ընդգրկելով երբեմնի կաղնուտ-պատգամախոսարանները: «Նորոգված» և ընդարձակված անտառներից մեկը նրա կողմից ***«Տաճար մայրի»*** կոչելը «Երազամույն տեղերի»՝ նվիրական կաղնուտների պաշտամունքի տակավին չմոռացված հիշատակների սքողված

[27] Հնդեվրոպական ավանդույթներում ամենասրբազանը կաղնին էր և նրա վրա աճող ճագոմը [**Лосев А.Ф.** Античная мифология в ее историческом развитии, М., 1957, с. 273 (Мифы народов мира), Энциклопедия, т. II, М., 1982, с. 254], **Pliny.** Natural History, vol. IV, London, 1960, XVI, XCV, pp. 249-251, **Фрэзер Дж. Дж.** Золотая ветвь, М., 1986, с. 615-623.

արձագանք էր: Թերևս, այդ էր պատճառը, որ «Ոսկե դարի» պատմիչներից միայն Փավստոս Բուզանդը հիշատակեց «Տաճար մայրի» տեղանունը: Ղազար Փարպեցին, V դարավերջի քաղաքական դեպքերի կապակցությամբ, նույն կաղնետունկ անտառը հիշատակելիս պարզապես անվանում է «Խոսրովակերտ»[28]: Այսինքն՝ վաղքրիստոնեական հայ գրավոր ավանդությունը մեկընդմիշտ մոռացության մատնեց ***«Տաճար մայրի»*** տեղանունը, հիրավի, որպես հեթանոսական ժառանգության բացահայտ դրսևորում, և երկու անտառներն էլ հորջորջեց մեկ ընդհանուր ***«Խոսրովակերտ»*** անունով:

Այսպիսով, Հայոց դարձից ընդամենը երեք տասնամյակ հետո Խոսրով Կոտակի իրականացրած քաղաքաշինական ծավալուն մտահղացման գաղափարական հենքն, ըստ ամենայնի, բխում էր բուն ձեռնարկի մեջ ընդգրկված Դվին ամրոց-սրբավայրում, «Երազամույն տեղեր» պատգամախոսարանում մ.թ.ա. III հազարամյակից ի վեր տևականորեն իշխող բնապաշտական աշխարհընկալումից:

ԴՎԻՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԱՆՏԻԿ ՇԵՐՏԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՔՈՉԱՐՅԱՆ Գ.Գ.

Ամփոփում

Դվինի բազմաշերտ պաշտամունքային կենտրոնի պեղումների արդյունքների շերտագրական վերլուծությունը մ.թ. IV-V դդ. և մ.թ.ա. X-VIII դդ. շերտերի միջև բացահայտել է անտիկ ժամանակաշրջանի գունազարդ խեցեղենով հագեցած՝ 0,30÷0,60 մ հզորությամբ մշակութային շերտ: Վաղմիջնադարյան հոգևոր շինությունների հիմնապատերի շարվածքում հայտնաբերվել են կրկնակի օգտագործված մեծ թվով սրբատաշ քարեր և անտիկ ճարտարապետական տարրեր: Նման պատկերի ակնհայտ ներկայությունը վկայում է այստեղ նախաքրիստոնեական պաշտամունքային կառույցների երբեմնի գոյության մասին: Հնագիտական նյութի համեմատա-

[28] **Ղազար Փարպեցի,** Հայոց պատմություն, Թուղթ Վահան Մամիկոնյանին, քննական բնագիրը՝ Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, աշխարհաբար թարգմ. և ծանոթագր.՝ Բ. Ուլուբաբյանի, Ե., 1982, էջ 350-351:

կան վերլուծությունը պատմաքաղաքական իրադրության համատեքստում հավաստում է, որ բլրի ստորոտին առնվազն մ.թ.ա. I հազ. սկզբից ի վեր հայտնի Դվինի հնավանդ սրբավայրը Արտաշիսյան և վաղ Արշակունյաց ժամանակաշրջաններում տևականորեն պահպանում էր իր գործառույթը:

Բանալի բառեր՝ Դվին, բազմաշերտ պաշտամունքային կենտրոն, շերտագրական վերլուծություն, անտիկ ժամանակաշրջան, նախաքրիստոնեական պաշտամունքային կառույցներ, պատմաքաղաքական իրադրություն, ավանդապահ սրբավայր:

ХАРАКТЕРИСТИКА АНТИЧНОГО СЛОЯ ЦЕНТРАЛЬНОГО КВАРТАЛА ДВИНА

КОЧАРЯН Г.Г.

Резюме

Стратиграфический анализ данных раскопок многослойного культового центра Двина между слоями IV-V вв. н.э. и X-VIII вв до н.э. выявляет культурный слой с обилием фрагментов расписной керамики античного периода. Вместе с тем в кладках фундаментов раннесредневековых культовых монументальных зданий зафиксировано множество гладко тесаных камней и античных архитектурных элементов вторичного использования. Это важное обстоятельство свидетельствует о том, что в античную эпоху здесь имели место дохристианские культовые сооружения. Сравнительный анализ археологического материала с учетом историко-политической ситуации в регионе (II в. до н.э.-II в. н.э.) указывает на то, что у подножья холма в арташесидский и раннеаршакидский периоды продолжало функционировать традиционное святилище Двина.

Ключевые слова – многослойный, культовый центр, Двин, стратиграфический анализ, античный период, дохристианские культовые строения, историко-политическая ситуация, традиционное святилище.

THE ANTIQUE LAYER OF CENTRAL DISTRICT OF DVIN

G. KOCHARYAN

Abstract

Stratigraphic analysis of the excavated data of the multilayer cultic centre Dvin, between the layers of the 4-5th centuries AD and the 10-8th centuries BC, revealed a cultural layer of 0.30-0.60 cm characterized by painted pottery. The double use of fine massive stones and the presence of Classical architectural elements is attested in the foundations of the Early Medieval cultic monumental buildings. That considerable fact testifies to the existence of pre-Cristian cultic structures here. The comparative analysis of the archaeological material, together with the account of historical and political situation in the region (2nd century BC-2nd century AD), attests that the traditional sanctuary of Dvin known since the beginning of the 1st millennium BC had been functioning on the hill-foot until the Artashesid and Arshakid periods.

Key words – multilayer cultic centre, Dvin, stratigraphic analysis, Classical period, pre-Cristian cultic structures, historical ad political situation, traditional sanctuary.